

Կայքի Քաղաքականությունը

Ընդհանուր դրույթները վերաբերում են բոլոր տեսակի պատվերներին:

Սույն կայքում "Grand Kapan" տուրիստական գործակալությունը հանդիսանում է Կատարող, իսկ վերջինիս միջոցով ծառայություններ ստանալու համար դիմողները` Պատվիրատուներ:

1. Գաղտնիության քաղաքականություն

Անձնական տվյալների հավաքման նպատակը

տրամադրել Ձեզ մեր տուրերն ու ծառայությունները, այդ թվում, ժամանակ առ ժամանակ տեղեկացնել դրանց թարմացումների մասին

Անձնական տվյալների հեռացում

մեզ անհրաժեշտ է որոշակի ժամանակահատված պահպանել անձնական տվյալները, որպեսզի կարողանանք պատասխանել այն հարցերին, որոնք կարող են առաջանալ տուրերի և ծառայությունը մատուցելու ընթացքում

Անձնական տվյալների ուղղում կամ փոփոխում

• անձնական տվյալների լրացման մեջ ինչ-որ հարցերի կամ թերացումների դեպքում հնարավոր է փոփոխություն կատարել նախքան մեր կողմից վերջնական հաստատումը

• հետագա այլ փոփոխությունների և ճշտումների համար խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ. կոնտակտների համար անցնել հետևյալ հղմամբ`

<http://kapan.itresources.am/#join>

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

Պատվիրատուն պարտավորվում է`

- Կատարողի կողմից իրեն մատուցված ծառայությունների դիմաց վճարել նախօրոք ձեռք բերված պայմանավորվածության համաձայն` կատարողի հաշվեհամարին բանկային փոխանցում կամ առձեռն վճարում կատարելու եղանակով*
- կատարել վճարումները 33 դրամով*

• Ժամանակավոր կացության, այցելության և տարանցիկ վայրերում պատասխանատվություն կրել օրենքով սահմանված կարգով, այդ թվում՝ իր ապօրինի գործողությունների հետևանքով պատճառած նյութական վնասի համար **Կատարողը պարտավորվում է՝**

• Պատվիրատուին տրամադրել տեղեկատվություն՝ առաջարկվող տուրիստական, հյուրանոցային ծառայությունների վերաբերյալ

• տեղեկատվություն տրամադրել ծառայությունների գների, պայմանների, ինչպես նաև դրանց չեղարկման կարգի մասին

• Պատվիրատուին ներկայացնել հաշվարկային փաստաթուղթ՝ տուրիստական ծառայությունների վճարման համար

• պատվերը ստանալուց հետո կապ հաստատել Պատվիրատուի հետ, տեղեկացնել պատվերի իրականացման հնարավորությունների մասին և հավաստի տվյալներով պատասխանել Պատվիրատուի բոլոր հարցերին

• պատշաճ որակով և ճիշտ ժամկետներում մատուցել երկկողմանի համաձայնությամբ հաստատված պատվերը

• չիրապարակել Պատվիրատուի մասին որևէ անձնական տեղեկատվություն, առանց նրա համաձայնության

• երկկողմանի համաձայնությամբ հաստատված պատվերում տեղ գտած առաջարկը փոխելիս տեղյակ պահել Պատվիրատուին պատվերի կատարման օրից 1 աշխատանքային օր առաջ՝ տալով նրան նախորդ պայմանավորվածությանը չզիջող պայմաններով և նույն գնով առաջարկ

Կատարողը իրավունք ունի՝

- անհատական տուրերի պատվերը հաստատելու համար պահանջել ամբողջական վճարում, որը ենթակա չէ վերադարձման
- խմբակային տուրերի և հյուրանոցային համարների հաստատելու համար պահանջել ամբողջական վճարում, որը ենթակա չէ վերադարձման

3. Պատվերի հաստատումը

- Էլեկտրոնային կապի միջոցով տրված պատվերը համարվում է "երկկողմանի համաձայնությամբ հաստատված", եթե Կատարողի "վերջնական հաստատում" կոչվող Էլեկտրոնային նամակին Պատվիրատուի կողմից տրվել է դրական արձագանք-պատասխան
- վերը նշված պարտավորությունների կատարումը կողմերի համար պարտադիր է դառնում պատվերի երկկողմանի հաստատումից հետո
- անկախ այն հանգամանքից, ծառայությունը մատուցվելու է Պատվիրատուի համար, թե երրորդ անձի՝ թվարկված պարտավորությունները պարտադիր են թե Պատվիրատուի, թե պատվերն ընդունողի համար

Անկանխատեսելի իրավիճակներ

կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե պարտավորությունները չեն կատարվել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով (երկրաշարժ, ջրհեղեղ, պատերազմ, հաղորդակցական միջոցների աշխատանքի դադարեցում, տվյալ թաղամասում կամ շենքում համընդհանուր բնույթ կրող իրավիճակներ և այլն):